«Այժմ, որ Հայոց Արշակ Թագաւորը եկել է մօտդ, պատմի՛ր, ի՞նչպէս է նա խօսում հետդ, ի՞նչ ձայն է հանում եւ կամ ինքզինքը ի՞նչպէս է պահում մօտդ»:

Արքան պատասխանում է. «Որպէս մէկը՝ իմ ծառաներից: Այդպէս է համարում նա ինքզինքը եւ աշխատում՝ ոտքիս հողը դառնալ»:

Նոքա թէ՝ «Արի՛ այժմ, ինչ որ քեզ պիտի ասենք, պահի՛ր նորա այստեղ, եւ միեւնոյն ժամանակ մարդիկ դրկիր Հայոց երկիրը եւ Հայաստանի սահմաններից երկու բեռան չափ հո՛ղ բերել տուր, այլ եւ մի կահոյր (սափոր) ջո՛ւր: Հրաման կը տաս, որ վրանիդ յատակի կէսը Հայաստանից բերած հողով ծածկեն: Ապա՝ անձամբ կը բռնես Հայոց Արշակ Թագաւորի ձեռքից եւ նախ կը տանես վրանի այն կողմը, ուր բուն իսկ հողն է: Այդտեղ դու հարցումներ կ'ուղղես նորան: Ցետոյ դարձեալ կը բռնես նորա ձեռքից ու կը տանես հայատակ հողով ծածկուած տեղը: Այդտեղ եւս դու նորա բերնից խօսքեր կը լսես, ու այդ ձեւով կ'իմանաս արդէն, թէ նա արդեօք իսկապէս հաստա՞տ է քո ուխտին եւ թէ քեզ հետ կնքած դաշինքը պիտի պահէ՞, երբ ազատ թողնես որ Հայաստան դառնայ: Եթէ նա հայ հողի վրայ (կեցած ատեն) խիստ–խիստ բաներ խօսէ հետդ, դիտցի՛ր ուրեմն, թէ ո՛ր օրը որ նա Հայոց երկիրը հասնելու լինի, նա ա՛յդ իսկ լեզուն պիտի դարձնէ քո դէմ, իր հին պատերազմները պիտի նորոգէ դէմդ, նոյն ճակատները եւ նոյն թշնամութիւնը յուզէ»:

Շապուհ կատարում է կախարդների խորհուրդը: Արաբական ուղտերով մարդիկ է ճամբում Հայաստան՝ հող եւ ջուր բերելու այնտեղից: Մի քանի օրից յետոյ բերում են ուղածը:

«Ապա հրաման է տալիս Շապուհ Թագաւորը, որ իր վրանի յատակի կէսը Հայաստանից բերուած հողով ծածկեն եւ վրան ջուրը ցանեն, իսկ միւս կէսի վրայ թողնեն իր բուն իսկ հողը: Եւ յետոյ իր մօտ է բերել տալիս Հայոց Արշակ Թագաւորին եւ հրամայում, որ բոլոր ներկաները հեռանան: Ու բռնելով (Արշակի) ձեռից, սկսում է առաջ ու ետ երթալ, ճեմել:

«Եւ վրանի մէջ առաջ ու ետ ման գալով՝ ասում է (Շապուհ) նորան, երբ պարսիկ հողի վրայ էին ճեմում.

«Ասա՛, ինչո՞ւ համար դու թշնամացար իմ դէմ, Հայոց Արշակ Թագաւոր: Զէ՞ որ ես իրեւ իմ որդիս սիրեցի քեզ, նոյն իսկ իմ դուստրը քեզ կնութեան տալ կամեցայ, ուզեցի քեզ իմ որդիս դարձնել: Դորա փոխարէն՝ դու կոպիտ վարուեցար հետս. միայն քո կամքին անսալով եւ առանց իմ կամքիս շարժուելով՝ դու թշնամացար ինձ: Ամբողջ երեսուն տարի պատերազմեցիր դէմս»:

«Արշակ Թագաւորը պատասխանում է.

«Ես մեղաւոր եւ յանցաւոր եմ քո առջեւ: Եւ ես եկայ ու ջարդեցի, յաղթեցի քո թշնամիներին: Ակնկալում էի որ դու ինձ կը պարգեւես կեանքս: Բայց, իմ թշնամիները հրապուրեցին ինձ եւ երկիւղով լեցրին սիրտս քո հանդէպ, ինձ հեռացրին քեզնից: Այն երդումը, որ ես երդուայ քեզ, ինձ առաջ տարաւ, վե՛ր բարձրացրեց: Ահա եկել եմ եւ քո առջեւ եմ գտնուում: Ահաւասիկ ես՝ քո ծառայ՝ քո ձեռքում եմ գտնուում, ինչպէս կ'ուզես՝ վարուի՛ր հետս, արա՛ ինչ կ'ուզես.— Սպա՛ն ինձ, քանի որ ես, ծառայ, քո հանդէպ շատ յանցաւոր եմ. ես մահուան եմ արժանի»:

«Շապուհ արքան, բռնած նորա ձեռքից, շարունակում է ճեմել ու լսել նորա չքմեղանքները: Ցետոյ տանում է դէպի հայակողմը, ուր յատակը Հայաստանի հողով էր ծածկուած: Եւ երբ (Արշակ) այն տեղն է հասնում ու հայ հողը կոխում, խիստ խրոխտանում է եւ հպարտանում, ուրիշ ձայներ են լսում նորա բերնից: Սկսում է այսպէս խօսել եւ ասել.

«Հեռո՛ւ ինձնից, չարագո՛րծ ծառայ. դո՛ւ, որ տէր ես կանգնել քո տէրերի դէմին: Ես քեզ եւ քո որդիներիդ երբեք չեմ ներիլ իմ նախնեաց վրէժը, չեմ ներիլ Արտեւան Թագաւորի մահը: Հիմակ ու հիմա՝ դուք, ծառաներդ, թէեւ գերուած էք պահում մեր՝ ձեր տէրերիդ դահը, բայց ես երբեք չե՛մ հանդուրժանալ, մինչեւ որ այդ, որ մեզ է պատկանում, չվերադառնայ մեզ»:

«Դարձեալ բռնում է (Շապուհ) նորա ձեռից, կրկին տանում Պարսից հողի վրայ: Այդ ժամանակ արդէն՝ Արշակ զղջում է իր ասածների համար, կռանում եւ բռնում է նորա ոտներից, զղջում եւ ապաշխարում է ասած խօսքերի համար: Բայց երբ բռնելով նորա ձեռից